

ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ

Խ Ա Զ

Խորհուրդ Խաչին երկնանուէր
 Յոր վաղ իսկ հեծս ի հրաւէր
 Սուգեցան միսք իմ անգօր ,
 Այժմ առաւել եւս քան զոր
 Երբեմն ազդամբ կաթոգի
 Լընու գիմ սիրս եւ զհոգի :

Յորում ողկոյզըն նըմէցաւ՝ իմանալիս այս հընձան ,
 Անչինչ կըսակս այս՝ յորում տառք անմահութեանըն գրեցան ,
 Որ ի խորոց կորսեսենէ ձրգեաց զմեզ Սուրբս այս կարթ ,
 Եօթնահանանչ փայլմանն Հոգւոյն այս աւետարակ ջահազարդ ,

Զամբիծ սիրոյն Յիսուսի՝
 Յորմէ ոչինչ պակասի ,
 Զորդեգրութեանն Հաւատոյս՝
 Որ է անւարժ ի մեզ յոյս ,
 Զխորհրդոյն փրկութեան՝
 Յոր կ'սն ոգիք ապաստան ,
 Զիմաստութեանն անմոլար
 Որ ըզնորհացն ուղղէ զլար ,
 Արծարծեսցէ ի սըրսիս
 Զյաւերժականն հաւատսիս :

Եւ ինձ գրեցից պարծանս՝ ունել ի ծոցի
 Ըզնոգեւոր զինուն ըզսիպ փառացի ,
 Քան թէ ի շողակաց չնառ պատկերին՝
 Զանարծանի անձինս լընուլ ըզթերին :

Դպրեկանք, Արմաշ

ԹՈՐԳՈՄ ՎՐԴ. ԳՈՒՇԱԿԵԱՆ